

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ, ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժինը (այսուհետ՝ Բաժին) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ ՇՎՏՄ) կառուցվածքային ստորաբաժանում:

2. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, սույն Կանոնադրությամբ, ՇՎՏՄ-ի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշումներով և ՇՎՏՄ-ի ղեկավարի հրամաններով:

3. Բաժնի կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում ՇՎՏՄ-ի ղեկավարը:

II. ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Բաժնի հիմնական խնդիրներն են՝

1) ՇՎՏՄ-ի տեղեկատվական քաղաքականության կազմակերպումը և իրականացումը,

2) ՇՎՏՄ-ի գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկումը՝ մամուլի հաղորդագրություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, տեսա-ֆոտոնյութեր և այլ տեղեկատվական նյութեր պատրաստելու և տարածելու միջոցով,

3) ՇՎՏՄ-ի ու զանգվածային լրատվության միջոցների միջև համագործակցության ապահովումը, հայտարարությունների, հարցազրույցների, մամուլի ասուլիսների,

ճեպագրույցների կազմակերպումը և անցկացումը, զանգվածային լրատվության միջոցների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ աշխատանքային հանդիպումների կազմակերպումը և անցկացումը,

4) հասարակական միավորումների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության ապահովումը, համատեղ աշխատանքային միջոցառումների պլանավորումը և իրականացումը, դրանց լուսաբանման համատեղ կազմակերպումը, տեղեկատվության փոխանակումը,

5) ՇՎՏՄ-ի գործունեության ոլորտին առնչվող զանգվածային լրատվության միջոցներում հրապարակված նյութերի ուսումնասիրությունը, վերլուծությունը և արխիվացումը

6) տնտեսավարող սուբյեկտի գործունեությանն առնչվող, ոչ պարենային արտադրանքի անվտանգությանը և չափումների միասնականության ապահովմանը, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշման լիցենզիաների պահանջներին վերաբերող նոր իրավական ակտեր ընդունվելու կամ ուղեցույցներ հրապարակվելու, ինչպես նաև դրանցում փոփոխություններ կամ լրացումներ կատարվելու դեպքում դրա մասին «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տնտեսավարող սուբյեկտների իրազեկման ապահովումը,

7) ՇՎՏՄ-ի ղեկավարի հանձնարարությամբ ստուգումների արդյունքների վերաբերյալ հանրային իրազեկման իրականացումը:

III. ԲԱԺՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Իր առջև դրված խնդիրների լուծման նպատակով Բաժինը իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) կազմակերպում և անցկացնում է ՇՎՏՄ-ի ղեկավարի մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ, ճեպագրույցներ գործունեության ոլորտներին առնչվող և հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ,

2) պատրաստում և տարածում է մամուլի հաղորդագրություններ, իր իրավասությունների շրջանակներում հանդես է գալիս պարզաբանումներով ու հայտարարություններով,

3) ներկայացնում է առաջարկություններ զանգվածային լրատվության միջոցներով ելույթներում, մշտական թեմատիկ խորագրերում, հեռուստա-ռադիոհաղորդումներում ՇՎՏՄ-ի պաշտոնատար անձանց մասնակցության վերաբերյալ և ապահովում դրանց կատարումը,

4) կազմակերպում է աշխատանքային հանդիպումներ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ ՇՎՏՄ-ի ղեկավարի և այլ պաշտոնատար անձանց մասնակցությամբ,

5) ՇՎՏՄ-ի գործունեության պատշաճ լուսաբանման կազմակերպման նպատակով ՇՎՏՄ-ի ստորաբաժանումներից ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր, այդ թվում՝ մշակվող իրավական ակտերի նախագծերի պատճենները,

6) ամփոփում և վերլուծում է ՇՎՏՄ-ի գործունեության ոլորտներին առնչվող զանգվածային լրատվության միջոցների նյութերը,

7) մասնակցում է անցկացվող էտրիդի նիստերին, խորհրդակցություններին, քննարկումներին, բանակցություններին, պաշտոնական և աշխատանքային այլ միջոցառումներին,

8) իրականացնում է ՇՎՏՄ-ի պաշտոնական կայքէջի տեղեկատվական սպասարկումը,

9) սահմանված կարգով հասարակությանը տեղեկացնում է քաղաքացիների դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման արդյունքների մասին,

10) համագործակցում է հանրապետական գործադիր իշխանության այլ մարմինների համապատասխան ստորաբաժանումների հետ,

11) իրականացնում է օրենքներով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

12) ՇՎՏՄ-ի ղեկավարի հանձնարարությամբ Բաժինն իրականացնում է նաև կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներ:

IV. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Բաժինը ղեկավարում է Բաժնի պետը:

8. Բաժնի պետը՝

1) իրականացնում է իր պաշտոնի անձնագրով իրեն վերապահված լիազորությունները,

2) կատարում է ՇՎՏՄ-ի ղեկավարի կողմից իր լիազորությունների սահմաններում տրված հանձնարարականները:

9. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը՝ Բաժնի պետի ներկայացմամբ:

10. Բաժնի կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Բաժնի պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում նրան փոխարինողի կողմից:

11. Բաժնի աշխատակիցները կարող են ընդգրկվել ՀՀ վարչապետի հրամանով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում: